

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՎԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍՏԱՆՍՆ

Երկու քիչ մեկ ծրարով

Տարեկան 14 ֆր.

Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 Ժողով

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Ծանոցման տողը

20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ԶՈՐԻՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՄԱՐ

Rédaction 'u journal

«iravounk»

VAHNA (u garé

Редакция

и ВѢСТНИКЪ

«Кр вунк»

ВАРНА

Դրոշմանք ետ չեն


» բռնիք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴ

Ազգային երկսեռ վարժարանաց եւ մանկապարտեզի վերաբացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Սեպտեմբեր 1 ին :

Կր հրաւիրուին ծնողք եւ պաշտպանք մինչեւ ՅԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԿԱԿԱՆ ՄԱՐԿԱՆ ԴՈՒՍՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ : Երբ թուականն վերջ ալ եւս աշակերտ չպիտի ընդունուի : Հոգաբարձ Սեպտեմբեր 1-ին :

ԷԶՄԻՍԻՆԱՅ ՄԷՋ



Օրուան հրատապ ազգային խնդիրն է էջմիածնայ Կեդրոնական ժողովը : Օրըստօրէ ստացուած մանրամասնութիւնները եւ նոր լուրերը ժողովին գումարման, բացման եւ խորհրդակցութեանց մասին շատ հետաքրքրական եւ միանգամայն զայրացուցիչ են :

Վանքին միաբանութիւնը սուգի մէջ ընկղմածի մը երեւոյթը կը ներկայացնէ եւ բնաւ տեսակցիլ իսկ չուզեր պատգամաւորներուն հետ : Առաջիմ 46 պատգամաւորներ ներկայ են, որոնց 36ը Դաշնակցական :

Կաթողիկոսը՝ որ իր կոնգակներով այս ժողովը հրաւիրած պահուն անշուշտ գեղեցիկ յոյսերով վառուած էր, այսօր յուսախաբ լինելու երկիւղէն դողահար անկողին ինկած է : Քանի մը անգամ յետաձգած է ժողովին պաշտօնական բացումը, եւ վերջապէս կ'երեւայ սպառնալով այլեւս խուսափողական միջոցները եւ միւս կողմէ դաշնակցականներէ եկող սպառնալիքներէն հարկադրեալ, օգոստոս 17ին անձամբ իջած է ժողովարանը ու գահը բազմելով, հետեւալ բացման ճառը — եթէ կարելի է ըսել գահաճառը — արտասանած ու մեկնած է :

Հայ ազգը հիւանդութիւններ չատ ունի : Էջմիածինն ալ հիւանդութիւններ չատ ունի : Բայց հայ ազգը այնքան կենսունակ է, որ կարող է բժշկել այդ հիւ-

ւանդութիւնները, եւ ահա ձեզ ուղարկել է իբրեւ բժիշկներ : Օրհնեալ լինէք : գործեցէք, բայց կը պատուիրեմ գործել, որչափ կարելի է, գործեցէք որքան ներկայ ժամանակը թոյլադրում է, խոնարհեալ, բայց ոչ յանդուգն : Եթէ փող կուղէք, փող չունիմ տալու ձեզ : տալիս եմ օրհնութիւնս : Օրհնալ լինի եւ ուսաց տէրութիւնը : հազար օրհնալ, մանաւանդ մեր բարեփրոս փոխարքան, որ ազատութիւն տուեց ձեզ ժողովել այս տեղ եւ մտածել ազգի ցաւերի մասին : Շատ խօսել եւ մնալ չեմ կարող : օրհնալ լինէք, գործեցէք խոնարհեալ :

Վեհ՝ Կաթողիկոսը իր այս կարճ խօսքին մէջ իսկ երկու անգամ խոհեմութիւն յանձնարարած է պատգամաւորներուն եւ պատուիրած ընդհանրական թոյլատրածին չափ միայն գործել : Սակայն պատգամաւորներուն մեծ մասը չափ ու սահման ճանչալու տրամադիր չեն երեւիր : անշուշտ թիւ չեն կազմեր այն պատգամաւորները որոնք անգեթնական ու վերացական մտքերով ու գաղափարներով խանգաւառ էջմիածին կը նստին ու ինքզինքնին ժընէվ կամ Բարիկ կ'երեւակայեն : անոնք կը մոռնան կարծես, թէ հայ թուրք եւ ուս ժողովուրդի հետ է իրենց գործերը, ու կը մտածեն Զուգեցերիոյ կամ Ֆրանսայի կարգերը, կանոնները, սովորութիւնները ու բարքերը յանկարծական ոտսուսով մը կողկաս փոխադրել : կրօնականները վաւերաբար էջմիածնէն, եկեղեցին ազգէն զատել, ազգային հողերը հայ եւ թուրք մշակներուն ձրի բաժնել, բացարձակ ինքնակալութիւնը յանկարծ ռաւկաւարական հանրապետութեան վերածել եւայլն : գործեր՝ որոնց համար ոչ ժամանակը, ոչ տեղը ոչ պարագաները յարմարութիւն ունին այսօր, գործեր՝ որոնք էջմիածնի մը քայլ առ քայլ միայն կարելի է ձեռք բերել, ոչ թէ ոտսուսով, որ կրնայ

մեղ աղէտաբեր ըլլալ :

Հայրապետը տեսնելով թէ իր առջեւ ինչ գլուխներ չարուած են, հայկ դատած է խոհեմութիւն եւ չափ պատուիրել : Բայց մենք չենք սպասեր որ իր այս պատուերները նշանակութիւն ստանան Դաշնակցական պատգամաւորներուն մտքին մէջ : Եթէ նշանակութիւն ստանան իսկ այդ պատգամաւորները ազատ չեն իրենց մտքով ու խելով առաջնորդուելու : այլ անոնք պարտաւորեալ են Դաշնակցութեան շէֆերէն ու Բիւրօէն կանխապատրաստեալ բանաձեւերուն միայն իրենց քուէն տալու : Եւ ժողովի ընթացքին մէջ այդ տեսակետով այն տեսակ ծիծաղելի յայտնութիւններ կ'ըլլան : որ մարդ ինքզինք զաւելտախաղի մը հանդիսատես ըլլալ կը կարծէ երբ նկարագրութիւնը կարգայ :

Ու կը կարծենք թէ ծերանազարդ Հայրապետին կը սպասէ երկար, խիստ նրկար զղջում մը : իր կարճ խիստ կարճ մտածմամբ առած այս քայլին համար :

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Տիգրիսի թերթերուն մէջ ուրախութեամբ կը կարգանք թէ Սարգիս Կուկունեան վերադարձեր է Սախալին կղզիէն : ուր աքսորուած էր 17 տարի առաջ երբ ինք հայ հայրենասէրներու զինեալ խումբով մը թրքական սահմանագլխին վրայ բռնուած էր ուս զինուորներէ եւ իբր քաղաքական յանցաւոր իր ընկերներու հետ աքսորուած :

Կուկունեան Սախալինէն մայիսին մեկներ է եւ երեք ամիս ճամբորդութեամբ Տիգրիս հասեր է : Հոն Գանձակցի հայ կնոջ մը հետ պսակուած ու 5 զաւակներ ունեցած է :

— Օրտուպատի եւ Ագուլիսի շրջանները (Նախիջևանի գաւառ) վտանգի տակ են : Լեռներէն վերադարձող թուրքերը աւազակութիւններ եւ սպանութիւններ

կը գործեն : Կառավարութիւնը այդ կողմերու զինուորներու քանակը կաւելցնէ նոր գունդեր շրկելով :

— Շուշիէն կը գրեն օգոստ. 16ին, թէ այժմ Ղափան արեան եւ կրակի թատերաբեմ դարձած է 12 օրէ իվեր սկսած է հայ-թուրքական կռիւր եւ զեռ կը շարունակուի, սրախողխող կ'ըլլան ընտանիքներ, կոչնչանան շէն գիւղեր այրուելով : Այդ շրջանի մէջ թաթարները եռապատիկ աւելի են հայերէն, պէկերը խուժանին գլուխը անցած շրջապատած են Ղափանի հայ գիւղերը, որոնց՝ եթէ օգնութիւն չը հասնի գոյութիւնը իսպառ վտանգուած է : Քօջանանց հայ գիւղը երկար դիմադրելէ յետոյ աւերուեր է թաթարներէ, որոնք 500է աւելի բնակիչ շարքեր են : մէկ մարդ միայն ազատուեր է : Թաթար խուժանը յարձակեր է նաեւ Ագարաձ գիւղի վրայ, բայց յարձակումը յաջողութեամբ ետ մղուած է : Այդ կռիւններու ժամանակ այրուեր են մի քանի թրքական գիւղեր եւս, ինչպէս Եւմաղու, Զուլու, Ինչեար, Խաչտաֆ, Քարխանա, Գէօմաթան եւ Տանչալեր թուրք գիւղերը : նոր զօրք շրկուած է Շուշիէն Ղափան :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

Պուլիս 26 օգոստոս 1906

Յուզիչ տպաւորութիւն ըրաւ ամենուն վրայ այն լուրը թէ Նշան էֆ. որ Սուլթանին թարգմանը եւ տրտասահմանեան մամուլի գրասենեակին տնօրէնն էր, ծննդեամբ հայ, պալատէն իր ամառանոցը վերադարձած ատեն շոգեհաւին մէջ յանկարծամահ եղած է : Ընդհանուր համոզումը այն է թէ Նշան էֆ. թունաւորուած է Նէճիպ Մէլհամ մէկ խմբակէն :

Թանկ մէջ կը կարգանք Պալ-
սէն ստացուած հետեւալուերը՝
«Թուրքիոյ և Պուլկարիոյ մէջ
յարարենաւթեանց թուլութիւն
մը կայ, Համաձայնելու միտքը
կը գիրակշռէ: Թուրքիա և Պուլ-
կարիա համամիտ են բարեկամ-
ութեն կարգադրելու սահմանադ-
րոյ միջադէպերը և զգուշանալու
նոր ցրտութիւններէ: Սահման-
ները զօրացնելու համար առա-
քումները դադարած են և հրաժա-
ններ տրուած են օսմանեան զօր-
քերուն համախմբումները կե-
ցնելու:»

«Պուլկարիոյ նախարարաց խոր-
հուրդը որոշեց Բուսնաց վերա-
դարձնել վարժարանները և ե-
կեղեցիներուն մէկ մասը զորս
դրուած էին:»
«Յոյն կառավարութիւնը իր
հպատակներուն փնտնելու կը
պահանջէ, որ երկու միլիոնի կը
հասնի: Պուլկար կառավարու-
թիւնը նուազ տրամադիր է վճա-
րելու:»

Թանկ

Նոյնպէս Թանկի քաղաքական
բրժնի մէջ կը կարգանք:
«Երէկ հայոց մէծ ժողով մը
տեղի ունեցաւ Տփլիսի մէջ (պէտք
է ըսէր էլ միաժամայ մէջ) որոշում
մը քուէարկուեցաւ յայտարարող
թէ ժողովականը հայ ժողովուրդի
օրինական ներկայացուցիչները
ըլլալով, իրենց պարտքն է ժո-
ղովուրդին իրաւունքները ետ
պահանջելով յարգել տալ, կար-
գադրել այն բոլոր խնդիրները
որոնք կը վերաբերին հայ եկե-
ղեցւոյ, վարժարաններու վար-
չութեան, ստացուածոց մատա-
կարարութեան, և ուրիշ տնտես-
ական ու ընկերական խնդիրներ:
«Փոքրամասնութիւնը առա-
ջարկեց իբր փորձ՝ որոշում մը

թէ ժողովը մէկ տարուան համար
մշակէ բարենորոգմանց երկրոր-
դական ծրագիր մը, իսկ կարգ մը
խնդիրներու համար համազումար
ժողով մը հաւաքուի իբր ապա-
գայ ազգային ժողով: Այս առա-
ջարկը մերժուած է:

Պ Ո Ի Գ Ր Է Շ Ի ՆՈՐ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Պուրէշ 22 օգոստոս 906
ՀԱՅՐԵՆԱԿԻԶՆԵՐ

Մի քանի տարիէ ի վեր, մեր փայ-
փայած, երազած ծրագիրը—Հայկական
Վարժարան մը ունենալու փափաքը—
այսօր, վերջապէս, կրցանք իրակա-
նացնել:

Միտքեան Վարժարանը պիտի բաց-
ուի յառաջիկայ սեպտեմբեր 1 ին:
Գիտէք, անշուշտ թէ ազգի մը
զարգացման, անոր քաղաքակրթման
եւ պաշտպանման միակ ու միակ խա-
րիւր վարժարանն է:

Օտարութեան մէջ, մեր լեզուն չը
կորսնցնելու, մեր Ս. Եկեղեցին կան-
գուն պահելու և մեր ցեղը կորստ-
եան անդուգէն զերծ պահելու միակ
ճամբան մեր մատաղ սերունդը ազգային
դաստիարակութեամբ սնուցանել մեծ-
ցունելուն մէջ կը կայանայ:

Այն հիւրընկալութիւնը և այն
ազատութիւնը, զոր մեզ շնորհած է
Րուսիոյ ազատ հայրենիքն ու կա-
ռավարութիւնը, պարտք կը դնեն մեր
վրայ որ մենք օգտուելով անկէ, դաս-
տիարակենք մեր մատաղ սերունդն,
վարժենք զանոնք թէ Րուսական
եւ թէ մեր մայրենի լեզուներուն և
պատուաւոր, կրթութեամբ, օգտակար
քաղաքացիներ հասցնենք թէ երկրին
և թէ մեր ազգին:

Քանի մը տարիներէ ի վեր մեր ա-
պագայ սերունդը զուրկ ուսմունքէ
դաստիարակութենէ, տուներու անկիւ-
նը կամ փողոցներուն մէջ իւր թան-
կազին ժամերը սպաննեց մեր աչքերուն
առջեւ: Անոնց ապագայի թշուառու-
թեան, խեղճութեան պատասխանա-
տուն մենք ենք, քանի որ չենք
պատրաստեր զանոնք կեանքի կռիւին:
հերքէք է, որքան անոնք մեծցան անուս
եւ անգաստարակ...
Հիմա, որ գաղութիս անձնուէր

գոհողութիւններով եւ Պատ. Թաղի,
Խորհրդոյ բարեհաճ օժանդակութեամբ
ապահոված ենք Վարժարանի եւ Ման-
կապարտէզի բացման բոլոր պա-
հանջները, պարտք կը ծանրանայ բո-
լոր ծնողաց վրայ անհրաժեշտօրէն իրենց
զաւակը վարժարան զրկել կրթել տա-
լու:

Վարժարանը բացարձակապէս 20 ի է
ամէն դասակարգի հայ զաւակաց հա-
մար:

Մեծագոյն ամօթը, մեղքը գործած
պիտի ըլլայ այն ծնողքը որ իր աղջիկ
զաւակը 13 տարին եւ մանչ զաւակը
14 տարին չը լրացուցած, կամ գործի
մէջ իրեն օգնելու կամ անհիմն պատ-
ճառներով կը զրկէ իր զաւակը կրթու-
թեան բարիքներէն եւ զայն դպրոց չը
զրկեն:

Վարժարանի Տեսչութիւնն ամսոյս
14-էն սկսեալ, արդէն սկսած է ար-
ձանագրել աշակերտաց անուններն,
ուստի, աւելորդ չի պիտի ըլլար, անգամ
մը եւս չեղտել արգոյ ծնողաց թէ, այն
ամին ծնողք, որոնք իրենց զաւակները
զեռ չեն արձանագրած, թող հաճին
յիմեւ, ամեն օր առաւօտեան ժամը 9-ի
յետ կեսաւուր, Վարժարանի Տեսչու-
թեան եւ հոն իրենց զաւակաց արձա-
նագրութիւններն կատարել:

«Ուսումնասիրաց Ընկերութեան»
Վարչութիւնն, այս ամիս, պարտք
կը համարէ իր խորին շնորհակալու-
թիւնն յայտնել Մայրաքաղաքիս հայ
գաղթականութեան, որոնք իրենց ազ-
գասէր եւ եռանդուն նուիրատուու-
թեամբ պատճառ եղան Վարժարանի
բացման և ներկայիս կոչ կընէ մաս-
նակցելու նաեւ ամէն ազգ. յնրց, որոնք
զուրկ մնացած են անկէ:

Վարչութիւնն այն հաւատքն ունի
թէ հայ գաղութիս սոյն եռանդը միշտ
վառ պիտի մնայ, որն որ միակ իր
կուսան է բեղմնաւոր արգիւնքի մը
հասնելու:

ՈՒՍՈՒՄԵՆՍԻՐԱՏ ԸՆԿԵՐՈՒԹ.
Վ Ա Ր Չ Ո Ի Թ Ի Ե Ն
(ԿՆԻՔ)

ԴԱՍ ՄԻ ԱՅՈՒՄԵՐ ԶԷ՞

Իրաւունքի 59 թիւին մէջ մեր գը-
րած «ուսուցչական միութիւնը» յոգ-
ուածին բովանդակութեան մէկ երկու
կետերուն անճշտութեան համար, պա-
րոն Պապիկ, ոչ վայելուչ ոճով մը,
անհասկանալի դիտողութիւններ կընէ:

— Բայց թոթովից Աւագակապետը:
— Ի՞նչ կայ:
— Հարսիդ համար զատելիք սրուակս
ո՞վ պիտի առնէ:
— Ես պիտի առնեմ:
— Ախր ո՞ւր... ատիկայ անկարելի
է:
— Պատճառը:
Որովհետեւ այդ սրուակներուն
թրջութիւնը կ'աւելի, եթէ չգործածողը
ձեռքով չ'առնէ: Ձեր հարսը հոս չէ՞
միթէ:
— Հոս է... քայքայ կը քայքայի:
— Ինչ... Օ՞, շատ տխուր բան:
Կարծեմ թէ ձերմակ մազերս ցոյց կու-
տան ի՞նչ վիճակի մէջ ըլլալս: Ո՛չ
թէ անգիշտան, այլ թոռանս տեղ կը
համարուի ան:
— Իրաւ է, թոթովից մեծ-հանրմ
ու՞ դահլիճին մէջ բացուած դուռը
բանալով,
— Նաեղեա՛ր, Նաեղեա՛ր, ձայնեց:
— Ի՞նչ կայ, մեծ-հանրմ, պա-

Անոնք որ մեր գրութիւնը կարգա-
ցին ու հասկցան, անտարակուսելի է
որ ծիծաղելի գտան պ. Պապիկին «մի
դաս» վերնագրով յորդալի գրու-
թիւնը: որովհետեւ իբր պաշտպ. նո-
ղաման գրուած այդ անթմաստ երկ-
տողը, պարզապէս անհասկացողու-
թեան արդիւնք է, կամ այն է որ պ.
Պապիկ իւր կարգացածը հասկանալու
սովորութիւն չունի եւ կամ զիտմամբ
խեղաթիւրած է մեր յոգուածին իմաս-
տը: Հաստատենք ըսածնիս:

Քրտէ էինք... Ամէն տարի 800
Քր. իշխու մը եւս աւելցուցած են ժո-
ղովուրդին ուսին:

Պ. Պապիկ կը գրէ «... Իսկ այն
մտքին թէ ուսուցչական ժողովը ժո-
ղովուրդին վրայ տարեկան 800 Քր. ի
մի բռնէ է դրել շատ սխալ է:

Շատ ճիշտ է, բացէք «Շարժումի
833րդ թիւը, «Պուլկարիոյ հայ ուսու-
ցիչներուն համագումար» վերնագրով
լողուածին տակ պիտի կարդաք:

«Յառաջիկայ տարեշրջանին, Ուսուց-
չական միութեան պիտեմէն հետեւ-
եալն է:

«Մուտք 1250 Քրանք, որուն 450՞ը
անդամավճարներէ, իսկ 800՞ վիճա-
կահանութենէ կամ ներկայացումէ:»

Գուցէ, պ. Պապիկ սխալ է բնիւով
կուղէ հասկցնել. թէ ժողովուրդը այդ
դրամը բեռ չպիտի նկատէ. քանի ու
իրեն զաւակներուն համար է որ պիտի
գործածուի: Այսպէս ալ չէ, որովհե-
տեւ պիտեմէն ելքին մէջ նշանակուած
է. 400 Քր. պիտի գործածուի ուսու-
ցիչներուն շահերը պաշտպանելու: 400
պատգամաւորական ժողով կազմելու,
լրագիր հրատարակելու եւ վերջապէս
պիտի գործածուի այնպիսի բաներու:
որոնք աւելի ուսուցիչներու անձնա-
կանին կը վերաբերին եւ ոչ թէ հա-
մայրքին. պ. Պապիկ իրաւունք կու-
տայ ուսուցիչներուն Նոյնիսկ զրպա-
նել այդ դրամը. ինչո՞ւ, որովհետեւ
անոնք իրենց զրպանէն փոքրիկ զո-
հողութիւն մը ըրած են ի սէր ազգին
եւ պատրաստած են ծրագիր ու կանո-
նագիր, որոնք անգործագրելի պիտի
մնան, ինչպէս կը հաւատարմաւոր
պ. Ռաշիտ «Ռազմիկ»ին մէջ:

Ամէնէն ցաւալին այն է որ, պ. Պա-
պիկ թէ սխալ հասկցեր է եւ թէ սխալ
հասկցումէն անտարամբանական հետե-
ւողութիւններ հանած է: Այսպէս...
«... Մի քողարկուած գրիչը զարմա-
նում էր, թէ ինչո՞ւ ուսուցիչները ժո-
ղովի չեն հրապարակ եւ հոգաբարձու-
ները, հետեւաբար եւ մանրավաճառ-
ներին եւ կերպասածախսին եւ մեքե-
նագործին եւսայն...»

տասնանից կանացի խղղուած ձայն
մը:
— Հո՞գ ես, վրայ բերաւ մեծ-հա-
նրմ:
— Այ՛ն, չեչտեց ձայնը:
— Շուտ դահլիճը հկու՛ր՝ հրամա-
յեց մեծ հանրմ:

Ու քիչ յետոյ հերս՝ եկաւ առջի
օրուան մանկամարդ աղջիկը:
Մածկուած էր թանկագին սեւ մե-
տաքո՛ւ Ֆերասէ՛յի մը տակ, ճակտէն
վար ձգած էր նստա ու թրթուռն քող
մը, որուն փափուկ երեւոյթը կը
ներգաշնակէր դէմքին աղւոր գլխի
արտայայտութիւնը:

— Ա՛ս սրուակ մը, Նաեղեա՛ր,
պատուիրեց մեծ-հանրմ. Դանի՛ օր է
նեղութիւն մ'ունիս վրադ. գործածէ
ատիկա՛ բան մը չմնար:

— Ո՛չ, չեմ ուզեր... Ինձի ա-
տանկ բաներ պէտք չ'են... Իմ սիր-
տը կը ցաւի: մըմնջեց Նաեղեա՛ր:

— Սի՛րտդ կը ցաւի... ընդհատեց

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ
9
ԱՒՍԶԱԿԱՊԵՏԸ
ՄԱՍՆ ԱՒԱԶԻՆ
ԹՐԹՈՒՆԵՐ
(Շար. նախորդ թիւէն)
Այս անգամ ուղղակի մեծ-հանրմին
ապարանքը գնաց, որուն գոնապանք
թոյլ տուաւ որ ներս մտնէ:
— Բարձ՛ր, Աստուծոյ մա՛րդ, բա-
րո՛վ... մըմնջեց մեծ-հանրմ խնդու-
թեան խելայեղ եղած արտասանու-
թեամբ մը: Շնորհակալ եմ որ աչքս
ճաթաղ չը մնաց, եթէ ո՛չ շատ պի-
տի նեղուէի. Եկու՛ր, դահլիճը մը:

Նախ մենք չենք գրած թէ հոգա-
բարձունքը ինչու չեն հրաբորւած,
թէ եւ չատարաբար կը լինէր այս-
պիսի դատողութիւն մընիւր:

Դրած ենք. «Աս ծրագիրը կազմելու
համար գոնէ հրաւէր մը չլինէ՞ր հա-
տարակու թեան գիտակից մասին»։ Ե-
թէ գիտակից ըսելով հոգաբարձու կը
հասկցուի, կը հետեւի թէ պ. Պապիկ
հոգաբարձու չլինելով գիտակից ալ չէ,
ուրեմն ինչու իրեն չհասկցած բաներու
մէջ կ'իյնայ, Բարեբախտաբար այս
հասկացողութիւնը ճիշտ չէ: այս սը
խալ հասկացողութեան եզրակացու-
թիւնը այնչափ հիմնաւոր է որ չիտա-
կը պ. Պապիկին իմացականութիւնը
տարակուսի տակ կը ձգէ: Ինչո՞ւ
պաշտօնը կը չփոխենք արհեստին հետ.
միթէ արժանիք ունեցող նպարավա-
ճառ մը, կերպասավաճառ մը, մեքե-
նագործ մը, արհեստին բերմամբ հո-
գաբարձու չի կրնար ըլլալ: Տեղն է
հարցունել պ. Պապիկին, թէ դուք ո՞վ
էք, երկինքէն իջած էք եւ թէ ձեր
գործը ի՞նչ է, համալսարանական
սոքթօր մը, փաստաբան մը թէ...
երկրաչափ մ'էք:

Թերթ ըմբռնումի ուրիշ օրինակ
մը.

«Եւ Զարմանալի գտնելով այդպիսի
մի համագումար թղաւում էր.
թէ կոչակարներն ինչու՞ այդպէս
չէն անում եւ այլն»:

Պ. Պապիկը վերագրեալը՝ հետեւեալ
պարբերութենէն եզրակացուցած է.

«Փակագործի մէջ կարելի էր աւելցու-
նել թէ ինչու դերձակները, կոչկա-
կարները եւ այլն արհեստաւորները նը-
ման սենտիկաներ կազմելու համար
յարգոյ հասարակութեան բարեփոխու-
թեան քիչ մ'ողորմութեան չեն գիմեր,
քանի որ իրենք ալ իրենց ապագան
բարեփոխելու համար զբաղի պէտք ու-
նին եւ մի՞թէ վերջինները աւելի հա-
րուստ են քան առաջինները»:

Ասկէ որոշ կերպով յայտնի է որ
զարմանալու խնդիր մը չկայ. ըսել
կուզենք թէ դասաւանդել իր շահը
պաշտպանելու եւ ապագան բարեփո-
խելու համար ժողովուրդին գիմելու այն-
չափ իրաւունք ունի. որչափ արհես-
տաւոր մը կամ հասարակ գործաւոր
մը, Եթէ մի երրորդ մարմին յանձն
առնէր ուսուցչի ինքնուրու, իբր ազգին
օգտակար մարդոց, չահեք պաշտպա-
նելու համար, դրամ հաւաքել ժողո-
վուրդէն, ատոր համար ըսելիք չէինք
կրնար ունենալ:

Այսպիսի գաղափար մը յայտնուած
լինելուն համար ելլել ըսել սխալակա-

կարի եւ ուսուցչի տարբերութիւնը
չիմացող մի էակ» եւ այլն խօսքեր կը
նշանակէ թէ պ. Պապիկը իւր պապի-
կութեան բերմամբ հասկանալու եւ
տրամաբանելու յատկութիւնները կոր-
սնցուցած է.

Պ. Պապիկը իտալերէն ալ գիտէ ե-
ղեր. ամէնք ալ հասկցա՞նք:

Դաս մը այնպէս չէ՞:

Մ.

ՀԱՅ ՆԿԱՐԻՉ ՄԸՆ ԱԼ

Սօֆիայէ մեզ կը գրեն.

Վերջին Համալսարանի գեղարուես-
տական ցուցահանդէսին առթիւ, որ
Սօֆիայի մէջ քացուած է օգոստոս 15ին
եւ պիտի վերջանայ հոկտ. 1ին, ու-
րախառիթ երեւոյթ մէ որ հարիւրէ
աւելի տեղացի եւ օտար ցուցադրող-
ներու մէջ մասնաւոր ուշադրութիւն
գրաւած են Պուլկարանայ երիտասարդ
նկարիչ Պ. Միհրան Թադեւոսի ցու-
ցադրած եօթը պատկերները որք են.

- 1) «Գուրգուրէ գորգում» աղջիկ մը
- 2) Բէյլաճաճ մը «Կօրնօ Պանեաէն»
- 3) Ձմեռուան բէյլաճաճ մը
- 4) Գնդու մը «Սրաներկ»
- 5) Աղջիկ մը «
- 6) Ծօք մը «Կուրկար գիւղացի
- 7 Ծօրուհի մը

Արդէն տեղական պուլկար լրագիրք
այս անգամ եւս գովեստով կ'իտօսին իր
մասին, նաեւ ներքին գործոց նախա-
րար Բէթթօք գնահատած է հայ ար-
ուեստագէտը եւստոր նկարներուն վեր-
ջի երկուքը գնած:

Կարծի որ փափկաճաշակ եւ կարող
հայեր հաճին բարոյապէս եւ նիւթա-
պէս յաջաւերել երիտասարդ հայ նկա-
րիչը, որ փայլուն ապագայ մը կ'իտո-
տանայ, գնելով անոր նկարները,
փոխանակ գնելու օտարներու գործերը,
որոնց միակ արժանիքը չատ անգամ
օտար անուններ կրելնն է:

Արդէն ցուցադրողներու գործերը
հետզհետէ կ'գնուին իրենց ազակցաց
կողմէ եւ օտարք մեր գեղարուեստա-
սիրութեան եւ սոցիալսիրութեան վրայ
չատ գէշ գաղափար պիտի կազմեն,
երբ տեսնեն որ հայ արուեստագէտին
գործերը իր ձեռքը մնացեր են:

Աւագակապետը:

— Այո՞:

— Ուրեմն ա՛ն այս սրուակէն,
չնչոցեց Աւագակապետը: Տե՛ս, բերա-
նը ամուր մը գոցուած է թուղթի
կտորներով: Երբ ցերեկ ըլլայ, քակէ՛
այդ թուղթի կտորները, բա՛ց զանոնք
ու նետէ՛ ջուրով լեցուած մաքուր,
բայց լայն բերնով ամանի մը մէջ:
Յետոյ երկու ժամի չափ թո՛ղ անցնի:
Թուղթի կտորները լաւ մը կը թրչուին
ատանկով: Ան ատեն խմէ՛ այդ ջուրէն
գաւաթ մը եւ անոր վրայ կաթիլ մը-
նալ սրուակէն առ բերանդ: Դիտ-
ցած եղի՛ր որ կ'անցնի սրտիդ ցաւը...
ա՛լ չ'ես զգար ու պիտի օրհնես զի՛ս՝
քանի կեանք ունենաս աշխարհի
մէջ:

— Նաեւ զար չը կրնալով իր հոգին
գառնացնող ձայնը յայտնել, ախա՛յ
չարժում մ'ըրաւ ու «օ՜ֆ...» մը հա-
նեց բերնէն:

— Մի՛ նեղուիր, աղջի՛կս, նկա-

տել տուած Աւագակապետը: Դեռ աշ-
խարհքիս երանելի օրերու մէջ կ'ապ-
րիս... դե՛ռ անոր սեմերու վրայ նոր
ոտքդ դրած ես: Նայէ՛, ի՞նչդ կը
պակսի... Պէտք է՛ միթաքնես
կեանքդ... անոր ստուէրը թանձր է
ու չուտով չը փարատիր: Դիմանալու
է կեանքի ատանկ պզտիկ վշտերուն:
Ի՞նչ է որ՝ սրտի ցաւը... Աստուած
հեռու պահէ՛, անա՛նկ ցաւեր կան,
որոնք ներս քաշուած են, խո՛ր, շատ
խորը մտած են մարդուն մէջ... ու
չ'են արտայայտուելու: Ատո՛նք, այդ ցա-
ւերն են որ դարման չ'ունին, աղջի՛կս
այդ ցաւերն են որ չ'են մոռցուելի,
մինչեւ որ մեր գլուխը հանգչելու
դնենք ցաւու հողին տակ:

Մանկամարդ կիւնը կեցած տեղը
զոզողաց, ինչպէս կայծակէ մը զար-
նուած մէկը, աթոռներցաւ ու գլուխը
կախեց կուրծքին վրայ՝ ծածկելու հա-
մար իր մեծ աղուր աչքերու տակ ար-
ցունքները: Յետոյ մօտեցաւ այդ բա-

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ
ՖԻԼԻՊԻ

«Հայկական Կրթարան» ը՛ իր 8 ըդ.
(ու թերթի) Տարեշրջանը պիտի սկսի
սեպտ. 7ին:

Կրթոցի համար այս տարուան մեր
ընտրած չէնք առաջինները կը գերա-
զանցէ ամէն կերպով: Մանաւանդ՝
Գիշերօթիկներու քննութեան համար
ամեն կարգադրութիւն եղած է քանզի
այդ նպատակին համար կառացուած
հոյակապ եւ բարգրադիր չէնք մընէ:

Գիշերօթիկներու համար ծնողքը կամ
ուրիշներ կրնան մեր հասցէին դիմել
այսպէս — Բաւարիա Վարշաւա
Ֆիլիպոսյը (Պուլկարիս)

Հիմնադիր — Տնօրէն
Հ. Ե. Եարտմեան

ՍԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Անիի մէջ հնախուզական պե-
ղումներ կատարող բրօթէսէօր
Մարր այս տարի ի մէջ այլոց
գտած է Գագիկ Թագաւորի ար-
ձանը: Սա գաղափար կուտայ
Բագրատունեաց Թագաւորներու
դէմքի եւ զգեստի մասին. Թա-
գաւորի մագերէ մինչեւ պիտի
կը հասնին եղբր խոպոպներով.
ունի երկար մօրուք: Գլուխը
արաբական փաթթոց. սա կը
վերագրուի արաբական գերիշ-
խանութիւնը ընդունած ըլլալուն
հազած է երկար մուշտակ, վը-
զէն կախուած է խաչ մը: Ար-
ձանը ձեռքին վրայ կը բռնէ
Գրիգոր Լուսաւորչի տաճարը, ու-
րով կը հանդիսանայ եկեղեցոյ
պաշտպան: Արձանը կարմիր քա-
րէ շինուած է կրօն Մշակ:

— Եգիպտոսէ օգափոխութեան
համար եկող աղագայիներէ շա-
տերը սկսած են վերադառնալ
իրենց տեղերը: Նորեկ հայերու
համար հոս ներս չընդունելու
լուրը տեղական կառավարու-
թեան մէկ քանի անգամ հանած
գլուխը թիւններէն առաջ ե-
կած է, բայց յետոյ նախարա-
րութեան գիմում ըլլալով, հրա-
հանգ ստացուած է որ առանց

գլուխը թիւններէն առաջ
բոլոր հայերը որոնք անցագիր
ունին:

— Տարածայնութիւն կայ որ
ցած հայ ժմնադիւթ մը նամա-
կով մը խնդրեր է կրթական
նախարարութենէն որ օտարա-
հապտակ հայերու բացարձակա-
պէս արգելուի հայ վարժարան-
ներու մէջ ուսուցիչ ըլլալ: Բայց
չենք կարծեր որ կրթական նա-
խարարութիւնը գէթ այս տար-
ուան համար այդ խտուածեան
գիմէ, քանի որ հայ ժմնա-
դիւթներու մեծ մասը ուսուցչու-
թեան ամուլ ապարէզէն խոյս
կուտան, իսկ տրամադրելիներու
թիւը եւ ունեց կարողութիւնը
անբաւական են հայ վարժարան-
ներու պահանջին:

— Անցեալ շաբթու վասպու-
րականի սովեցոյ ինպատ տեղի
ունեցած թատերական ներկա-
յացման զուտ հասոյթը 400 ֆրի
չափ եղած է: Այս գումարը ար-
դէն յանձնուած է տեղոյս Խաղ-
թորհրդին, որ վաճառականաց
դասէն ալ հանգանակութիւն մը
ընելով, ամբողջ գումարը պիտի
ղրկէ նպատակին, արագ եւ ա-
պահով միջոցով մը:

— Էջմիածնէ օգոս. 21ին կը
հեռագրեն, թէ Պէսարարիոյ,
Կարսի, Նուխու եւ Ախալքալաքի
վեց պատգամաւորները հրաժա-
րեցան կեդր. Ժողովին մասնակ-
ցելու եւ ճամբայ կելլեն երթալու
իրենց տեղերը:

«ՉԱՅՆ» ՀԱՅՐԵՆԵԱՑ

Այս մեծածաւալ շաբաթաթերթը յե-
ղափոխական ջղուտ յօդուածներ,
քննադատականներ եւ ազգային ու
քաղաքական լուրեր կը պարունակէ:
Արտասահմանի համար տարեկան
բաժնիքին է 12 ֆր. կանխիկ:

Հասցէն է՝

Արմէնիան Բաշալիշիկի քօ.

Բ. Օ. Պօքս 1731, Պօսթըն, Մաւ-

[Աւերիկա]

Կարելի է բաժանորդագրուել նաեւ
Իրաւունքի խմբագրութեան միջոցաւ:

— Ուրիշ կնիկ ալ ունի՞:

— Ունէր... բայց մեռաւ երկու ա-
միս առաջ: Այն մանուկը, զոր տե-
սաք, անկից է:

— Փաշան շատ կը սիրէ՞ այս ման-
կամարդ կիւնը:

— Կը սիրէ... միայն թէ...

— Ի՞նչ կայ:

— Անօգուտ է իր սէրը, որովհետեւ
միշտ հիւանդկախ, տխուր ու մեղա-
մաղձոտ է իր կիւնը:

— Է՛հ, կը շուգուի... սովորաբար
մանկամարդ աղջիկներն երբ կ'արգուին,
տարիի մը չափ տխուր ու մեղամաղձոտ
կըլլան: Ետոյ կը վարժուին...

— Ա՛խ, ի՞նչ գիտնամ: Բարի ֆա-
քի՛րս, Աստուած թո՛ղ բերնէդ լսէ:

(Շարունակելի)

րի մարդուն, որ սփոփել ուզած էր
զինքը, յարգանքով մընդունեց ջր-
ուակն ու քաշուեցաւ իր սենեակը:

— Հարսերիդ քաղաքացի՞ է, հար-

ցուց Աւագակապետը:

— Ո՛չ պատասխանեց մեծ-հանրմ:

— Հապա՞:

— Բաղէչու քաղաքէն է:

— Շատո՞նց է որ ամուսնացած է:

— Ութը ամիս հազիւ կայ:

— Ու՞ր է ամուսինը:

— Կառավարութեան կողմէ, պաշ-

տօնով Մուսուլ գնաց:

— Ե՛րբ կուգայ:

— Աստուած գիտէ... Թերեւս ա-

միսէ մը... անոր գալը յայտնի չ'է:

— Չաւակը է չ'է՞:

— Ո՛չ... Ինչ ետքը կարգուած է

ամուսինս ու անկից եղած ջէ՛լայդ գա-
ւակը:

— Փաշտ՞ է:

— Այո՞... եւ վեզիրութեան ամե-

նաբարձր տիտղոսն ունի:

ԹԻՒՐԲ ԿԱԶԵԹԱՎԱՐՆԵՐ

Ն Ի Ի Մ Ո Ի Ն Է

(Եզվէթի նուստիսիդան տէվամ)

Պիւր եւրոպէական էրմէնիսին երկու գանասա ումում թէլէկ-րաֆար թաթարարա հիւճում Խոտէր, ամա կէլէլիմ էրմէնիէր թաթարարուն չէհրիւրինի եա-գարար, խանէլէրինի խարապ Խոտէրէր նէ թէլէկրաֆ վար, նէտէ կազէթա սիւթիւնլարունտա պիր մէգալէ վար, հիշ պիրի օլ-մատըգտան սօնրա եինէ գապա-հաթ իսլամլարա եիւթլէնէճէք տիր:

Հալպուքի պիշարէ թաթար-լարտա նէ սիւլա վար, նէ ազճէ վար, նէ տինամիթ վար, հիշ պիրի, հիշ պիր վազըթ օլտուլը եօգ, օլմագ իհիթիմալի տէ եօգ եինէ գազահաթը թաթարարա եիւթլիտիրէր:

Տահա զարիպի շուրասը տըրքի, Բուսիա հիւթիւմէթի էրմէնիէրի սէվմէզ, ինթիլաւըլար ֆիւան-լար տիյէ հէր տայիմ էրմէնի միլլէթի ալէյհիստէ գապահաթ-լար խանտ Խոտէրէր, ամա էր-մէնի-թաթար մէսէլէսինտէ գա-պահաթը թաթարարա վէրիւ-լէր(*), ճուրասը տախի գապիլի թաաճուպ տըրքի, պիզիմ թա-թարարուն ինթիլաւըլ գըսմը էրմէնիէրի իլէ սուլհ միւզէքէ-րաթընտա պուլունտուրլար, եիւզ տէֆա սուլհնամէ անտընտա ալ-տանըրլար, եինէ թէքրար շու-էրմէնիէրիլ մուհէտէ, մուգա-վէլէյէ կէլիւրէր. եիւզ պիրինճի տէֆա եինէ ալտանըրլար, եինէ ալտանըրլար:

Պիզ Գալգասիա միւսլիմանլարը գարտաշլարըմըլըն հալընա նի-հայէթ տէրէճէտէ զէմնաք օլու-րուզ, Գաֆգասի միւսլիման գարտաշլարըմըլըն պաշլարը աղ-ըրտըլը զէման պիզիմտէ պաշը-մըլը աղըրիօր. անլէրէ կէլէն քէ-տէր, անլէրէ կէլէն պէլա ճիւմլէ միւսլիմանլարը ինճիտիր, ֆա-գաթ նէ չարէ գալպ, եիւրէքտէ օլան եարէյէ մէրհէմ եօգ. ալլահ հէր ումուրըմըլը իսլահ էյլէսին:

(ԽՈՒՆԱ) Խիթամ

[*) էրմէնիէրի սէվմէյէն րուս հիւ-թիւմէին պիլէ թաթարարը գապա-հաթը կէօրմէսի էրմէնիէրին կիւնահ-սըզլըղնա էն գալի պիր իլամ տըր:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹՈՒՐԲԻՍ

Սուլթանըն խասթալըլը թէհ-լիքէտէն ազատէ տէկիլ տիր. հէր նէգատար ճանընը ազղընա անլարագ ճամիյէ կիթմիշ վէ էլ-չիլէրի հուզուրունա գապուլ իթ-միշ իսէտէ, Վիէննատան Տէյլի պիլէկրաֆա եազըլաւըլը իւզրէ:

Բէք Գալգասիա վէ գալիֆ տիւշտիկիւնտէն պիրտէն պիրէ էօլմէսի մէօհթէմիլ տիր:

— Սուլթանըն իքինճի թէր-ճիւմանը նչան էֆ Սէֆէրեանըն սէրայտան խանէսինէ կիտէրքէն նալէհան էօլմէսի զէհրիւլէնմէք սէմէրէսի ատտ օլընիօր: Միւ-թէվէֆա Սուլթանըն էմիլիյէթիւնի գազանմըլ վէ միլլէթիւնէ զարար-սըզ պիր մէմուրըլը: Փագաթ սէրայտա խըտմէթ իտէն էմիլ-յէթլի էրմէնիէրին էքսէրիսի քէնտի ճէլէլէրի իլէ էօլմէմիշ օլտըլարը մալիւմ տըր:

— Կիրիտ իշիւն թային օլը-նաճագ զօմիսէրին (պէյ) Եունան գըրալընըն թէնսիպի իլէ նասպ օլմասընա գարշը Պազը Ալի բը-թէսթ իտուպ, քէնտի րիզասը իլէ թային իտիլմէսինի թալէպ իթմիշ տիր:

ՏԱԽԻԼԻԷ

Բազար կիւնիւ Սաէտինէնիէ սալօնընտա թօրլանան պուկար միթիկիւնտէ շու գարարլար վէ-րիտիլ:

1) Սեպտեմբեր 6 տա էհալիի պէօյիւկ մէթիկէ տալէթ իտէ-րէք, հիւթիւմէթի ֆիլիպէ գա-րարընը վէ մէքթէպլէր զա-կօնընըն օնընճը մատտէսինի իճալա մէճպուր իթմէք:

2) Բուլարը խօշուտ իթմէկ իշիւն վաթանէրվէրլէրի սըգ-մագ վէ Մաքէթիսիալըլարը գօլ-մագ բօյիթիգալընա գարշը բը-թէսթ էլլէմէք:

3) Պիր թագըմ չիքթէթլէր նա-մընա էհալիտէն բարա թօրլա-յանլարըն թագիպիւնի հիւթիւ-մէթտէն թալէպ իթմէք:

4 Էտիրնէ վիլայէթիւնտէ Պուլ-կարլարա ֆէնալըգ իտէն Բուլ-չէթալարընա գարշը չէթալար կէօնտէրիլմէսինէ միւսաատէ իս-թէմէք:

5) Սիպտեմբ. 6 տա օլաճագ մի-թիկէ թէրթէպաթ կէօրմէք իշիւն 12 ազատան պիր գօմիսիօն թէշքիլ իթմէկ:

— Հէր հաֆթա իքի ատէթ Եունան վաքօրը իլէ Պուրկազ, Ահսօլու, Մէսէվրէ վէ սայիր գասապալարտան 5-600 րոււլար հիճրէթ իթմէտէ տիրլէր: Պու-մուհաճիւրլէրին եօլըլըլը իշիւն վաքօր գուլաշեալը վէ իանէ գօմիսիօնը Բէք չօգ սուհուլէթ վէրմէքտէ տիր. րէվայէթէ կէօրէ, պիլէթլէր մէճճանէն օլ-տըլը կիպի Բէք ֆաքիւրլէրէ եօլ խարճըլը տախի վէրիօրլար:

— Էհալի նամը իլէ Պուլկա-րիատաքի էրմէնիէրի, Թիւրք-լէրի վէ Եհուտիլէրի Բուլարա գարշը պօյքօտա, եանի Բուլ-լարտան ախգուլթա իթմէմէյէ տալէթ իտէյօրլար. պու էմրէ իթաաթ իթմէյէնլէրի թաազիթ իտէճէքլէր իմիշ:

— Տէվէտէն Տօպրիշէ Զաքը-լաճագ շըմէնտըֆէր իշի սեպ-էտէ միւնագասէյէ գօնուլաճագ տըր:

ԲՈՒՍԻԱ

Մէճլիսի վիւքէլա Եհուտի-տիլէր իշիւն օլպն միւսթէսնա գանուլարը լաղլ իթմէքտէ տիր. եանի պուլունտան սօնրա Եա-հուտիլէր տախի սայիր միլլէթ. լէր կիպի իտէտիքլէրի վիլա-յէթլէրտէ եաշալաճագլար, միւլք սաթըն ալմագ, թիւթիւն վէ իշ-կի սաթմագ հազլարընա հայիզ օլաճագլար:

— Բուսիանըն թիւրքիտան գըթաընտա ինթիլալ գուհուր իթմիշ տիր. շըմէնտըֆէր եօլընը պօզմուշլար. իշիլէր վէ ասքէր-լէր եօլու եաքմագ իշիւն չալըշ-մագ իսթմէլէր իմիշ:

— Եհուտիլէր եաքընտա պիր ումուլի մէճլիս իտէրէք, Բուս-լար իլէ նէ միւնասէպաթտա պուլընաճագլարընա տայիր գա-րարլար վերէճէքլէր տիր:

— Մալիւմ օլտըլը իւզրէ, շիմ-տի Բուսիատա ինթիլալըլար ճէպրէն վէ եաթօտ խըրսըլըլէ բարա թէտարիք իթմէքտէ տիր-լէր: Վարշալատա պիր այ զար-ֆընտա 299 խըրսըլըլը վուգու պուլմուշ. չալընա բարալար 60000 րուպլի օլմուշ տըր:

— Սթօլիբի գապիւնէսի քէօյ-լիւլէր, մէքթէպլէր վէ մէզհէպ-լէր իշիւն պիր թագըմ գանու-նալէլէր թէրթիպ իթտիրմէք-տէ օլուպ, օնլարը աշըլմասը վատ օլընան Տումանըն միւլքէրէ-սինէ իհալէ իտէճէք տիր:

Քէօյլիւլէրի տախի հիւթիւմէթ

քէնտիսինէ պէնտ իթմէք իշիւն-անլէրէ պիր թագըմ վաալարի-տէյօր, Փագաթ 40 միլլիտը միւ-թէճալիւզ քէօյլիւլէր թօրազ իսթմէքտէ վէ հէրքէսին միւլք-լէրինի պէյիւլէրինտէ թագսիմ իթմէք իտտաաընտա օլտըլա-րընտան, հիւթիւմէթ իլէ ուլա-շալաշաճագլար: Հիւթիւմէթ ա-րազիլէրի քէօյլիւլէրէ թէրք օլընիօր իսէտէ՝ քեաֆի տէկիլ տիր:

ՄԻԻԹԵՆԵՎՎԻԷ

Աճէմիստանըն բաթիսիթընտա ինթիլալ գուհուր իթմիշ օլտըլը սէպէպլէ, մէճլիսի մէպուսան իշիւն ինթիլապարըն կիւնիւ-էլան թային օլընմամըլ տըր: Թէհրանտա պիւթիւն տիւքեալար գարալը տըր:

— Տիւնյիլը գաթիւն պէրաաթ իթմիշ օլմալլէ շիմտի քէնտիսի-նէ գամալըլը վէ խըյանէթ աթֆ իտէն կազէթալար ալէյհիստէ իղլիյաթ տալմասը աշաճագըլըլ, Եու հալտէ Բարիլ կազէթալարըն էքսէրիսի ալէյիւն իգալէ տալա իթմէլի:

ՐՈՄԱԹԻՉՄԻ ԴԵՂ

Մարմիոյ որեւիցէ մասին մէջ յօդա-ցաւ «սըզի» «քամի ունեցողները պէտքէ գործածեն այս վանա ծամոնը «եաքըն» որուն օգտակարութիւնը հարկաւոր-ներէ վկայուածէ: Պէտքէ տաքընիլ եւ կապիլ ցաւած տեղի, երբ ցաւն ան-հետանայ ծամոն ինքրին կը փրթի: մարմնոյ վրայ աւանց հրաք մը թող-նելու:

Գիննէ 3, 20 եւ 2 20 ֆր, կանխիկ պուլկարական նամակատրոյլ կընտու-նի:

Գիմիլ առ 8, 4 ճանկիւլեան վառնա

Одговорникъ А. Курбетиянъ

печатница Д. Тодоровъ С.-но-Варна

OMEGA 8038 00744

ԹԱԽՈՐ ԹՕՍՊԵՐԵԿԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ

Բարիգո, Ժընէվի եւ Պուլքսէլիցուցահանղէսներուն մէջ մեծագոյն պարգեւներ ստացող ու համաշխարային գնահատման բարձրագոյնին արժանացող այս ժամա-ցոյցի գործարանը «ՕՄԵԿԱ» իրօք իր անունը արդարացուցած է իբր ճարտա-մարտիւսը կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԿԱ ին հասցնող հա. տա. տ. թի ն մը:

Այս հռչակաւոր Գործարանին ներկայացուցիչն է Տ. Յակոբ Թօսպըլըգեանի վա-ճառատունը, ուր կը գտնուին «ՕՄԵԿԱ» ժամացոյցներու բոլոր տեսակները, ոսկեայ, արծաթեայ եւ պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ. Գինները ՉԱՓԱՌՈՐ:

Կը գտնուին նաեւ Պուլկարիոյ բոլոր կարեւոր ակնավաճառներու ե ժամա-գործներու քով: